

Արձանագրություն N4

2019 թվականի փետրվարի 22-ին ժամը 10:00-ին կայացած՝ Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

1. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ներկայացուցիչ Անժելա Մեսրոպյանը ներկայացրեց Միացյալ Թագավորության կառավարության «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն հարկային համապատասխանության բարելավմանը» ծրագրի շրջանակներում մշակված հարկային ուղեցույցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Վերջինս նշեց, որ Ծրագրի շահառուներն են ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Պետական եկամուտների կոմիտեն, իսկ PwC ընկերությունը նշված ծրագրի շրջանակներում հանդես է գալիս որպես կատարող կողմ: Նշեց նաև, որ Ծրագիրը մեկնարկել է 2018թ. նոյեմբերի 16-ին և ծրագրի ձևաչափին համապատասխան ուղեցույցի մշակման աշխատանքներին մասնակցում են նաև այլ փորձագետներ՝ Հ. Յանիկյանը, Ա. Մալխասյանը և այլք: Ուղեցույցը մշակվում է շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և շրջանառության հարկի շրջանակներում: Այն պարունակում է բազմաթիվ օրինակներ, գծապատկերներ՝ բոլորին հասկանալի և մատչելի լինելու նպատակով, կլինեն նաև հղումներ այն բոլոր իրավական ակտերին, որոնց կկատարվի անդրադարձ ուղեցույցի շրջանակներում: Հարկային ուղեցույցները Ծրագրի շահառուների կողմից վերջնական վերանայումից հետո համաձայն տեխնիկական առաջադրանքի պետք է տեղադրվի ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայքում, ուղեցույցներին համապատասխան հղումներ կլինեն նաև ՀՀ Ֆինանսների նախարարության և ՓՄՁ ԶԱԿ կայքերում:

Ցանկության դեպքում ուղեցույցների նախագծերը կուղարկվեն նաև Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի անդամներին՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով: Ա. Մեսրոպյանը նաև նշեց, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրվել է հարկ վճարողների կողմից հաճախակի տրվող հարցերի ցանկ, որոնք նույնպես ներառվել են ուղեցույցներում: Խորհրդի անդամների կողմից բարձրացվեց նշված ծրագրի շարունակական լինելու հարցը՝ շեշտելով օրենսդրական փոփոխություններին զուգահեռ ուղեցույցում համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը: Բարձրացված հարցի վերաբերյալ տեղեկացվեց, որ թարմացումները նախատեսվում է, որ կկատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմինների իրավասությունների շրջանակում, իսկ այդ գործընթացը դյուրինացնելու նպատակով ուղեցույցների էլեկտրոնային հարթակը սպասարկող ադմինիստրատորը(ները) ծանուցումներ կստանան թե, որ իրավական ակտում է փոփոխություն եղել, ուղեցույցում համապատասխան մասը(երը) թարմացնելու նպատակով:

2. ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը ներկայացրեց միասնական հաշվի համակարգում առկա խնդիրների կարգավորմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

ԵՏՄ անդամ պետություններից կատարվող ներմուծումների մասով հարկային հայտարարագրերի ճշտման դեպքում ներկայացվող ճշտված հայտարարագրերը համակարգի կողմից նոր ամսաթվով՝ որպես նոր փաստաթուղթ ընդունելու խնդրի կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալը նշեց, որ հարկ վճարողների կողմից սույն խնդրով ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով ներկայացված բոլոր բողոք-դիմումները բավարարվում են: Միաժամանակ նշեց, որ սույն հարցի օրենսդրորեն կարգավորումը ներկա պահին նպատակահարմար չէ, քանի որ այն պահանջում է ԵՏՄ անդամ բոլոր պետությունների օրենսդրություններում համապատասխան փոփոխությունների կատարում:

Նշեց, որ նախատեսվում է հարկ վճարողների կողմից միասնական հաշվին կատարված վճարումներից հարկային պարտավորությունները մարել ըստ հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետների, միաժամանակ, նախատեսվում է միասնական հաշվում առկա գումարների հաշվին հարկային պարտավորությունների մարման առաջնահերթությունը հանել, սոցիալական վճարների գծով վճարումները կատարել առանձին հաշվեհամարի, ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով միասնական հաշվում վարել առանձին հաշվի քարտ: Նախատեսվում է՝ օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները հարկ վճարողներին վերադարձնել եռամսյակային պարբերականությամբ:

Ներկայացվեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվում առկա գումարների վերադարձը կատարվում է դիմումում նշված գումարի չափով, սակայն ոչ ավելի, քան վերադարձման օրվա դրությամբ միասնական հաշվում առկա գումարի չափից: Նշված դրույթին համապատասխան, հարկ վճարողի կողմից ներկայացված դիմումում նշված գումարը միասնական հաշվում առկա գումարից ավելի լինելու դեպքում հարկ վճարողին միասնական հաշվում առկա գումարի չափով վերադարձ չի կատարվում: Վերոնշյալի հետ կապված ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ խնդիրը կկարգավորվի՝ Գանձապետարանի հետ համապատասխան համաձայնություն ձեռք բերելու արդյունքում:

3. Ներկայացվեցին շրջանառության հարկի հարկման համակարգում առկա խնդիրները:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը ներկայացրեց, որ ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կարող են համարվել շրջանառության հարկ վճարողներ (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի)՝ նույն հոդվածով սահմանված ժամկետներում հարկային մարմնի հաստատած ձևով հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում: Նշեց, որ գործող կարգավորումների շրջանակներում, հաճախ են լինում դեպքեր, երբ հարկ վճարողները բաց են թողնում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը հարկային մարմին ներկայացնելու ժամկետը և ստիպված են լինում մինչև հաշվետու տարվա ավարտը համարվել ԱԱՀ վճարող, կամ էլ, որպեսզի գործունեություն իրականացնեն շրջանառության հարկի համակարգում, ստիպված են լինում գրանցել նոր կազմակերպություն, որի պարագայում հնարավորություն են ստանում մինչև կազմակերպության պետական գրանցման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Առաջարկվեց, որ այն դեպքերում, երբ ԱԱՀ վճարողները բավարարում են շրջանառության հարկ վճարող համարվելու համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված բոլոր պայմաններին, հնարավորություն ունենան որևէ հաշվետու եռամսյակի սկզբից համարվել շրջանառության հարկ վճարող՝ հարկային մարմին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելով:

Վերոնշյալի հետ կապված ՀՀ ՊԵԿ ՎՄԸՍ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ նշված առաջարկության շրջանակներում, հարկ վճարողների՝ հարկման ընդհանուր համակարգից շրջանառության հարկի համակարգ տեղափոխվելու արդյունքում, վերջիններիս՝ ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից (այդ թվում՝ այն գործարքներից, որոնց դիմաց ստացվում են վարձակալական կամ օգտագործման վճար, տոկոս և (կամ) ռոյալթի) տարբերվող՝ օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ համարվող տարրերը շրջանառության հարկի համակարգում հարկման բազա չեն համարվի և չեն հարկվի, ինչի արդյունքում էլ հարկ վճարողները հնարավորություն կունենան մանրելու արդյունքում խուսափել հարկերի վճարումից: Հ. Մուրադյանի հետ համաձայնեցին նաև Խորհրդի անդամները՝ վերոնշյալ առաջարկությունը համարելով խիստ դիսկալին:

Հաջորդիվ, Փ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց շրջանառության հարկ վճարողների համար ՀԴՄ կտրոններում ապրանքների անվանացանկի, զեղչի չափի վերաբերյալ տեղեկատվության պարտադիր արտացոլման պահանջի վերանայման վերաբերյալ առաջարկությունը: Վերջինս նշեց, որ սույն առաջարկությունը նպատակ ունի շրջանառության հարկ վճարողներին չձանրաբեռնել լրացուցիչ վարչարարությամբ բոլոր այն դեպքերում, երբ դրա կիրառումը պետության համար չափելի կամ էական չէ: Սույնի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ առաջարկն անհրաժեշտ է քննարկել, և որ առաջարկեց այն ներկայացնել գրավոր տարբերակով: Աուդիտորների պալատի ներկայացուցիչ Ն. Սարգսյանը էլ նշեց, որ անհրաժեշտ է հստակ սահմանել, թե նշված պահանջն ում համար է պարտադիր, ինչի համար էլ անհրաժեշտ է կատարել համապատասխան վերլուծություն:

Հաջորդիվ, Փ. Թադևոսյանը ներկայացրեց հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ստացվող եկամուտների շրջանառության հարկով հարկման կարգավորումների վերանայման վերաբերյալ առաջարկությունը: Վերջինս նշեց, որ գործող կարգավորումների շրջանակներում, հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների այլ գործունեությունից ստացվող եկամուտները հարկվում են շրջանառության հարկի 20% դրույքաչափով, ինչի արդյունքում էլ հանրային սննդի ոլորտի ծառայություններ մատուցող և հանրային սննդի ոլորտի ծառայություններ չմատուցող շրջանառության հարկ վճարողները հայտնվում են հարկման անհավասար պայմաններում:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվեց շրջանառության հարկ վճարողների հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամուտներից շրջանառության հարկը հաշվարկել գործող կարգավորումներին համապատասխան՝ առանց շեմի և այլ սահմանափակումների կիրառման, իսկ այլ գործունեություններից ստացվող եկամուտներից շրջանառության հարկը հաշվարկել օրենսգրքի 258-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերով՝ պահպանելով շրջանառության հարկ վճարող համարվելու համար օրենսգրքով սահմանված սահմանափակումները:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով Աուդիտորների պալատի ներկայացուցիչ Ն. Սարգսյանն առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ և խնդրի լուծման տարբերակները քննարկել վերջինիս շրջանակներում: ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ Օրի Ալավերդյանն էլ նշեց, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների՝ Տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող՝ այլ ակտիվների

օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի 20% դրույքաչափի սահմանմամբ նպատակ է դրվել կանխելու հարկ վճարողների կողմից հնարավոր չարաշահումները, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ չառնչվող հարկվող օբյեկտներից ձևավորվող հարկման բազաները շրջանառության հարկի համակարգին վերագրելու և դրանով իսկ այդ գործունեություններին վերաբերող հարկման բազաները օրենսգրքով սահմանված շրջանառության հարկի դրույքաչափերով հարկելու ռիսկերը: «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Վ. Համբարձումյանն էլ առաջարկեց վերոնշյալ կարգավորումները չտարածել հյուրանոցային ծառայություններ մատուցող տնտեսավարողների վրա: Ծավալված քննարկումների արդյունքում որոշվեց հարցը քննարկել ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության կատարելագործման ընդլայնված խորհրդի նիստի շրջանակներում:

4. Աուդիտորների պալատի ներկայացուցիչ Ն. Սարգսյանը ներկայացրեց արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների մասով արտարժույթի փոխարժեքի որոշման հետ կապված հարցերը: Վերջինս նշեց, որ գործող կարգավորումներին համապատասխան՝ արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են (ինչպես ԵՏՄ, այնպես էլ երրորդ երկրից ներմուծման դեպքում)՝ համապատասխանաբար մաքսային և հարկային հայտարարագրերի ներկայացման օրվա փոխարժեքներով: Վերջինիս արդյունքում անհիմն և արհեստական տարբերություն է առաջանում հաշվապահական և հարկային հաշվառումների միջև, ինչի արդյունքում հարկատուները ստիպված են լինում վարել երկու տեսակի հաշվառում՝ հաշվապահական և հարկային, ինչն էլ հանգեցնում է լրացուցիչ ծախսերի: Նշվածը մեծ դժգոհություններ է առաջացնում նաև արտասահմանյան կապիտալով աշխատող ընկերությունների շրջանում: Սույն խնդրի կարգավորման նպատակով Ն. Սարգսյանն առաջարկեց վերանայել այս մոտեցումը, այն է՝ ներմուծվող ակտիվների համար որպես սկզբնական արժեքի հաշվարկման փոխարժեք վերցնել ակտիվի ձեռքբերման օրվա փոխարժեքը՝ Հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումները մոտեցնելով Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:

Վերոնշյալի կապակցությամբ Հ. Սահակյանը նշեց, որ նախկինում գործող՝ «Հայաստանի Հանրապետությունում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» N3 պարզաբանմամբ սահմանված դրույթները շատ մոտ էին հաշվապահական հաշվառմանը, իսկ Հ. Յանիկյանն էլ նշեց, որ պարզաբանմամբ

սահմանված կարգավորումների շրջանակներում խնդիրներ գրեթե չէին առաջանում: Արդյունքում՝ առաջարկվեց պարզաբանմամբ սահմանված դրույթների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ: Վերջինիս կապակցությամբ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա. Մանուկյանը նշեց, որ ներկայացված առաջարկը չի կարող ներառվել ներկայումս շրջանառվող՝ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում, և որ առաջարկվող փոփոխությունը կարող է կատարվել բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկման և համաձայնեցման արդյունքում:

5. «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը ներկայացրեց շրջանառության հարկ վճարողների՝ օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կանոնադրական (բաժնետերեր) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանելու հիմքով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու դրույթի վերանայման վերաբերյալ առաջարկությունը:

Նշվեց, որ հարկային օրենսդրությամբ նման դրույթի սահմանումը նպատակ ուներ սահմանափակել մեծ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողների՝ տրոհման միջոցով հարկման բարենպաստ ռեժիմում հայտնելու հնարավորությունը: Սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ այս դրույթը կիրառվում է այն հարկ վճարողների նկատմամբ, որոնց նախորդ կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարող համարվելու համար սահմանված շեմը: Վերոնշյալ խնդրի կարգավորման նպատակով առաջարկվեց սահմանել, որ օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան փոփոխակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, կարող են համարվել շրջանառության հարկ վճարող, եթե վերջիններիս նախորդ կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը չի գերազանցում շրջանառության հարկ վճարող համարվելու համար նախատեսված շրջանառության չափը:

Փոխկապակցվածության հիմքով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հարցի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Բադասյանը հայտնեց, որ ներկայումս շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանված կարգավորումներով նախատեսվում է բացառել այն դեպքերը, երբ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով փոխհամաձայնեցված գործող հարկ վճարողները՝ գործող օրենսդրական կարգավորումների կանխատեսելիության արդյունքում չեն համարվում փոխկապակցված և շարունակում են գործել շրջանառության հարկի

համակարգում: Նշեց, որ ի տարբերություն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանելու հիմքով փոխկապակցված համարվելու դեպքի, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով փոխկապակցվածության բացահայտման դեպքում անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանել, թե ինչ է նշանակում գործել տնտեսական շահերից ելնելով: Գործող կարգավորումների շրջանակներում՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու չափանիշները սահմանված են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.02.2018թ. N65-Ն հրամանով: Նախագծով նախատեսվում է ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու իմաստն ու նշանակությունը բացահայտող դրույթները ամրագրել նաև օրենսգրքում՝ ապահովելով իրավական որոշակիություն և օրենսգրքում օգտագործվող ձևակերպումների հստակություն: Նախատեսվում է նաև օրենսգրքով սահմանված հասկացությունները լրացնել հարկային պլանավորման սխեմա, հարկային օգուտ, հարկային օգուտ ստանալու նպատակ հասկացություններով, ինչպես նաև սահմանել դրույթներ՝ հարկային պլանավորման մեթոդների չարաշահման միջոցով հարկային օրենսդրության դրույթների շրջանցման դեպքերը բացառելու համար: Վերոնշյալ փոփոխությունները հնարավորություն կտան կոնկրետ դեպքերում գործի բոլոր հանգամանքները քննելու արդյունքում պարզել արդյոք հարկ վճարողները գործել են փոխհամաձայնեցված, հարկային պլանավորման սխեմայի իրականացման միջոցով արդյոք ստացել են հարկային օգուտ, թե ոչ: Վերոնշյալի հետ կապված «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Վ. Համբարձումյանը նշեց, որ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ է կատարել՝ պահպանելով իրավական որոշակիության սկզբունքը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՓԱՅԼԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ